
ՂԱԶԱԽՍՏԱՆԻ, ՂՐՂԶՍՏԱՆԻ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԱՀՄԵՂԱԿԱՆ
ՀԱՄՇԵՆԱՀԱՅԵՐԻՑ ԳՐԱՌՎԱԾ ՀԱՅԵՐԵՆ
ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ ՄԱՍԻՆ

ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

XVIII դարում Օսմանյան Թուրքիայում բռնի կրոնափոխված համշենցի հայերի մի հատվածը, որը XIX դարում հեռացել է Տրապիզոնի նահանգի Համշենի գավառից, ապրում է ներկայիս Թուրքիայի Արդվիհնի նահանգի Խոփայի և Բորչքայի գավառներում, Սաքարյայի նահանգի Քարասուի և Քոջաալիի, Դյուզդեի նահանգի Աքչաքոջայի գավառներում: 1878 թ. ռուսական տիրապետությանն անցած Աջարիայի գյուղերից կրոնափոխ համշենցիները 1944 թ. արտորվել են Ղազախստան ու Ղրղզստան, որտեղից էլ վերջին 3–4 տասնամյակների ընթացքում նրանք արտագաղթում են Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամաս, Ռոստովի և Վորոնեժի մարզեր:

Մեր հաշվումներով աշխարհի տարբեր երկրներում բնակվում են մայրենի բարբառով հաղորդակցվել կարողացող շուրջ 45–50 հազար մահմեդական համշենցիներ: Մակայն նրանցից շատերը աշխատանքի բերումով, խառնամուսնությունների և այլ պատճառներով հիմնականում օտարախոս են: Լեզվական տարատեսակ միջավայրերում ապրելն իր ազդեցությունն է թողել նրանց լեզվի վրա, որն իրենք անվանում են «համշեցնակ», թուրքերը՝ «Hemşince» (հեմշինջե), այսինքն՝ համշեներեն: Մենք նպատակահարմար ենք համարում այն կոչել Համշենի բարբառի Խոփայի խոսվածք, քանի որ կրոնափոխ համշենցիների ամենաշատ բնակավայրերը՝ շուրջ 20 գյուղ ու գյուղակ, գտնվում են Արդվիհնի նահանգի Խոփայի (թուրքերեն գրությամբ՝ Хора՝ Հոփա) գավառում:

Ըստ մեր ուսումնասիրությունների, Համշենի բարբառի Խոփայի խոսվածքն ունի երկու ենթախոսվածք՝ արդալացիների և թուրքցևանցիների¹: Արդալացիների ենթախոսվածքով են խոսում Խոփայի գավառի Արդալա (այժմ՝ Էշմեքայա), Չաղրինա (Գյունեշլի), Անչիոխ (Փրնարլը) և Բորչքայի գավառի Մանաստրը (Եշիլքոյ) գյուղերի համշենցիները, որոնք ծագումով Արդալա գյուղից են: Իսկ մեկուկես տասնյակ մյուս գյուղերի բնակիչները խոսում են թուրքցևանցիների (դրսեցիների) ենթախոսվածքով: Խոփայի խոսվածքում ա ձայնավորը մ և ն ընդային բաղաձայններից առաջ, հատկապես թուրքցևան-

¹ Ձայն համշենական (ժողովածու), հ. 3, կազմեց, խմբագրեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց Ս. Վարդանյանը, Երևան, 1989, էջ 207, Ս. Վարդանյան. Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), Երևան, 2009, էջ 73–76:

ցիների ենթախոսվածքում, վերածվում է օ-ի: Թուրքականցիների մոտ ր-ն երկու ձայնավորների միջև հաճախ սղվում է, իսկ արդալացիների մոտ կա՛մ սղվում է, կա՛մ վերածվում է յ-ի. օրինակ՝ փերի՝ փէի>փէյի, կարել՝ գաուլ>գայուլ, լորենի՝ լորի>լօյի: Բառավերջում ր-ն հնչյունափոխվում է յ-ի. օրինակ՝ մայր՝ մար>մայ, եղբայր՝ ախպար>ախպայ, տեր՝ դիր>դիյ և այլն:

Հայախոս համշենցիներից գատ «համշենցի» բազմաթիվ բառեր և տեղանուններ են օգտագործում նաև Ռիզեի նահանգի Հեմշինի (Համշեն), Չամլրհեմշինի, Բքիզդերեի, Չայելիի, Ֆրնդրքլըի, Արդեշենի ու Փագարի, Տրապիզոնի նահանգի Արաքլըի, Սյուրմենեի և այլ գավառների, Էրզրումի նահանգի Յաքութիյեի, Թորթումի, Իսփիրի և այլ գավառների թուրքախոս դարձած կրոնափոխ համշենցիները: Խոփայի խոսվածքին հատուկ ր>յ հնչյունափոխությունը նկատվում է նաև Ռիզեի նահանգի տարբեր գյուղերի թուրքախոս համշենցիների օգտագործած հայերեն բառերում. օրինակ՝ խխունջ՝ լօրդու>լօյդու, լօյդի, սարդ՝ սարթ>սայթ, մոր, գետնամորի, վայրի ելակ՝ մօր>մօյ, ոչ թունավոր օձի տեսակ՝ լաղթօրիք>լաղթօյիք և այլն:

2009 թ. փետրվարի 19-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի հրապարակած աշխարհի փտանգված լեզուների ցանկում Թուրքիայից ընդգրկված էր 18 լեզու, որոնցից արևմտահայերենը, լազերենը, Պոնտոսի հունարենը, արխազերենը, նաև, այսպես ասած, համշեներենը, բնութագրված էին որպես «բացահայտ փտանգված»: Ուստի, պետք է շտապել Խոփայի խոսվածքով հնարավորինս շատ բանահյուսական նյութեր հավաքել, որոնց միջոցով ավելի բազմազան է ներկայանում կրոնափոխ համշենցիների լեզվաշխարհը, որն ունի շատ հետաքրքիր դրսևորումներ:

1944 թ. Աջարիայի սահմանամերձ գյուղերից Ղազախստան և Ղրղզստան աքսորված մահմեդական համշենահայերին ուսումնասիրելու նպատակով 1984 և 1987 թթ. լինելով այդ հանրապետություններում, նաև Ուզբեկստանում, համշենցիներից գրառեցինք մի շարք երգեր ու հեքիաթներ, որոնցում հանդիպում են անձանոթ բառեր: Ներկայացնում ենք մի քանիսը:

1. 1984 թ. Ղազախստանի Չիմքենդի (1992-ից՝ Հարավ-Ղազախստանյան) մարզի Մայրամի շրջանի Չիրկինո գյուղում Փաշա Քարախիբրահիմովից (ծնվ. 1932 թ., գ. Գոնիո) գրառել ենք Աջարիայի համշենցիների նախկին գյուղերին նվիրված մեկ երգ.

Լուսնիկա իմ, տիբաձ իմ
 Հօմշեցեց կյադերն ի վե,
 Գօնլի դասն շադ պարցն ա,
 Գօրիաթե բարագ ա,
 Գյունատ շադ էրօնդ ա,

Ավգյատ փեչօտ կյադ ա,

Ջառնալէ չախօտ կյաղ ա²:

Մահմեդական համշէնցիների խոսվածքն ինքնին շատ խրթին է, իսկ անծանոթ բաներն է՛լ ավելի են անհասկանալի դարձնում, օրինակ՝ այս երգի «փէչօտ» և «չախօտ» բաները:

Ըստ մեր հարցումների, արդալացիները քամուն ասում են «քամի» («բումի»), իսկ թուրքնանցիները՝ «փուչ», ուստի «փէչօտ» նշանակում է «քամոտ»:

Երգում հանդիպող մյուս անծանոթ բառը՝ «չախօտ», նշանակում է «անձրևոտ», քանի որ Խոփայի խոսվածքով անձրևին ասում են «չախ»: Հետաքրքրական է, որ քրիստոնյա համշէնահայերից Ճանիկի՝ Ջենիգի (Մամսոնի գավառի գյուղեր) խոսվածքով խոսողներն անձրևին ասում են «վրայեգ», իսկ Տրապիզոնի (Տրապիզոնի գավառի գյուղեր) խոսվածքով խոսողները՝ «թաթավ»: Ռիզեի նահանգի Հեմշինի (Համշեն) գավառի կրոնավորի և թուրքախոս հայերը հորդ անձրևին ասում են «էրաք»³: Ըստ «Հայոց լեզվի բարբառային բառարանի», «երակ»՝ «էրագ», Արարատյան և Սասունի բարբառներով նշանակում է «կարճատև հորդ անձրև»⁴: Մենք ևս տարբեր բարբառախոսներից լսել ենք կարճատև անձրևին տրվող «երակ, էրակ» անվանումը:

Ներկայացնում ենք երգի թարգմանությունը.

Լուսին եմ, ծագել եմ
Համշէնցիների գյուղերն ի վեր,
Քանլը դարան շատ բարձր է,
Կվարիաթին գառիթափ է,
Գոնիոն շատ գեղեցիկ է,
Ավգյան քամոտ գյուղ է,
Ճառնալին անձրևոտ գյուղ է:

2. *Ղրղզստանի Օշի (այժմ՝ Բատկենի) մարզի Կզըլ-Կիյա քաղաքում բնակվող քեմենջեհար Ջուրի Թոքուզողլիից (ծնվ. 1929 թ., գ. Ճառնալի) 1984 թ. գրառել ենք հետևյալ խաղիկը.*

Հարսը ցախուղէ մեղավ,
Միյօղն էլավ, էրգէնցավ,
Թուն իմ մօյը հարս էլլէդ,
Արնէ, էրթա արդն ի վէ:

² Չայն համշէնական (Ժողովածու), հ. 3, էջ 209, 210, 239:

³ «Hemşinin Sesi» (Ankara), 1969, № 1, s. 11.

⁴ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, Երևան, 2001, էջ 377:

Սև ծովի տարածաշրջանում, այդ թվում՝ Աջարիայում, ինչպես նաև Թուրքիայի Արդ-վինի նահանգի Խոփայի ու Բորչքայի գավառներում աճում է մի մշտադալար բույս, որը մազլցում է ծառերի, շինությունների, ցանկապատերի վրա: Այն կրոնափոխ համընդհանրանում են «սիյոլ»: Խոփայի խոսվածքով «սիյուշ» նշանակում է «փաթաթվել», «գրկել», ուստի այդ բուսանունը թարգմանվում է «փաթաթվող»: Իսկ սիրելուն նրանք ասում են «հազ էնուշ», որը նշանակում է նաև հարգել, համակրել, հավանել, դուր գալ:

XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին Աբխազիա ու Կրասնոդարի երկրամաս գաղթած քրիստոնյա համընդհանրապես սերունդներն այդ բույսն անվանում են «սիրոդ», թեև վերջին տասնամյակներում, ռուսախոսության հետևանքով, այս և շատ ուրիշ հին բուսանուններ մոռացվում են: Իսկ որ այն հին է, վկայում են դեռևս XIX դ. վերջին արված հրապարակումները: Տրապիզոնի Ազգային վարժարանի ուսուցիչ Նշան Խոշյանը 1895 թ. «Հանդես ամսօրեայ» ամսագրում հրատարակել է մի ոչ մեծ բառարան, որում ընդգրկված է «Պոնտոսի շրջակայ գալաոց ու գիլդորեից մեջէն... լսած ու հաւաքած գալաոսաբարբառէն փունջ մը»⁵: 198 բառից բաղկացած բառարանի փոքր մասը՝ 50 բառ, (գեղջ.) նշումով է, ինչը նշանակում է, որ դրանք գրառվել են նահանգի գյուղացիներից, իսկ, ինչպես հայտնի է, Տրապիզոնի նահանգի գյուղացիները խոսում էին Համընդհանրաբարբառով, թեև հեղինակն այդ մասին ոչինչ չի գրում: Նրա գրանցած գեղջկական բառերի շարքում հանդիպում ենք նաև «սիրոդ» բուսանվանը. «Սիրոդ. սարմաշրգ աղաճը (գեղջ.)»⁶: «Sarmaşık ağacı» (սարմաշրգ աղաջը) թուրքերեն է և նշանակում է «բաղեղի ծառ»:

Բարբեն վարդապետ Կյուլեսերյանը (1928-ից՝ Մեծի Տանն Կիլիկիո աթոռակից կաթողիկոս), 1897 թ. Ճանիկի (Մամսոն) նորաստեղծ թեմի առաջնորդ դառնալով, իր պաշտոնավարման կարճ ժամանակահատվածում (մինչև 1899 թ.), Տրապիզոնի նահանգի Մամսոնի գավառում՝ Չարշամբայի, Ունիեի, Թերմեի և Ֆատցայի գավառակներում ուսումնասիրեց համընդհանրաբարբառը: Նա 1899–1900 թթ. Կ. Պոլսի «Բիրակն» պարբերականում հրապարակեց իր հետազոտությունների արդյունքները, այդ թվում՝ մանրամասն բացատրված բառարանը՝ 612 բառ՝ զումարած համընդհանրաբարբառով 12 ամսանունների, արական ու իգական 49 անձնանունների և 9 գերդաստանների անունների բարբառային տարբերակները⁷: Նրա կազմած բառարանում կա նաև մեզ հետաքրքրող բուսանունը. «Սիրոդ-Ծառերուն բունը փակչելով փաթթուող մշտադալար բաղեղ մը, որ իբր թէ սիրելով փաթթուած է»⁸: Իսկապես, քրիստոնյա համընդհանրաբարբառ սիրելուն ասում

⁵ Ն. Խոշյան. Պոնտական գալաոսաբարբառներէն նշխարք.– «Հանդես ամսօրեայ» (Վիեննա), 1895, - 6, էջ 183:

⁶ Նույն տեղում, էջ 185:

⁷ Բ. Կիլիկիական. Ճանիկի վիճակին մէջ գտնուող համընդհանրաբարբառ. – «Բիրակն» (Կ. Պոլիս), 1899, -31–32, 35, 38–39, 41, 44, 47–48, 49, 1900, - 1, 2, 3, 4, 6, 8:

⁸ Նույն տեղում, 1900, - 4, էջ 62:

են և՛ «սիրուշ», և՛ «հազ ընուշ», թեն երկրորդը երբեմն օգտագործվում է նաև «հարգել», «հավանել» իմաստով: Այնուհետև Բ. վրդ. Կյուլեսերյանը նշում է, որ բաղեղի այս տեսակը համընդհանրապես զատորոշում, առանձնացնում են թուրքերեն «սարմաշըզ» կոչվող բաղեղից. «Համընդհանրապես Բողդըր=բաղեղը, թրք. սարմաշըզ, կ'որոշեն սիրողին»⁹:

Համընդհանրապես 1910 թ. ուսումնասիրել է նաև Հ. Աճառյանը: Երկու շաբաթ մնալով Տրապիզոնում՝ նա քաղաքի բնակիչներից, մոտակա գյուղերի գյուղացիներից և ուսուցիչներից հավաքել է բարբառային նյութեր, որոնք հաջորդ տարի հրատարակել է իր «Հայ բարբառագիտություն»¹⁰ աշխատության մեջ, նաև 1913 թ. Թիֆլիսում տպագրված «Հայերեն գալառական բառարան» մեծադիր գրքում: Վերջինից ներկայացնում ենք «սիրող» բուսանվան մասին նրա բացատրությունը. «Հմշ. տեսակ մը մշտադալար բաղեղ է, որ ծառերուն բունին փակչելով կը փաթթուի»¹¹:

Հ. Աճառյանը Համընդհանրապես ուսումնասիրել է նաև 1944թ. օգոստոսին Աբխազիայում՝ Գագրայում, բայց իր «Քննություն Համընդհանրապես»¹² գրքի բառարանում, մեզ անհայտ պատճառով, այս բուսանունը չի ընդգրկվել:

Հետաքրքրական է, որ Ռիզեի նահանգի Հեմշինի (Համընդ) գավառի թուրքախոս համընդհանրերը, ըստ 2010 թ. մեր դաշտային գրառումների, պահպանել են բույսի «փաղեղ» անվանումը:

Ներկայացնում ենք Ղրղզստանում մեր գրառած խաղիկի թարգմանությունը.

Հարսը անտառ մտավ,
Բաղեղը ելավ, երկարեց,
Դու իմ մորը հարս լինեիր,
Առնեի, գնայի արտն ի վեր:

3. Խոփայի և Բորչքայի գավառների համընդհանրերը փայտփորիկին ասում են «փեթա-ձաքլար»: Բացատրում են, որ «փեթաձ» նշանակում է «փտած»: Կարծում ենք՝ այս բառի ծագումը հասնում է դարերի խորքը: Գրաբարում «փայտ» բառի հոգնակի սեռականը դառնում է «փայտից», հետագայում «փայտիցը» ժողովրդական ստուգաբանության հետևանքով շփոթվել է «փտածի» հետ: Նշենք, որ «փայտ» բառը գրաբարում ունեցել է նաև «ծառ, տունկ»¹³ իմաստը. օրինակ՝ «Փայտ պտղաբեր: Փայտս ամենաբերս: Փայտ փշա-

⁹ Նույն տեղում:

¹⁰ Հ. Աճառյան. Հայ բարբառագիտություն. ուրուագիծ և դասաւորութիւն հայ բարբառների (բարբառագիտական քարտէսով).– Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկուա – Նոր-Նախիջեւան, 1911, էջ 178–195:

¹¹ Հ. Աճառյան. Հայերեն գալառական բառարան.– Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 966:

¹² Հ. Աճառյան. Քննություն Համընդհանրապես, Երևան, 1947:

¹³ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. երկրորդ, Վենետիկ, 1837, էջ 930:

բեր: Փայտ կենաց: Ի փայտէն կենաց: Յամենայն փայտէ՝ որ է ՚ի դրախտիդ, ուտելով կերիջիր, բայց ՚ի փայտէդ գիտելոյ զբարի և զչար»¹⁴: Այսպիսով, «փեթածաքլար» բառը ստուգաբանվում է «ճառերի աքլոր»: Իսկ «փայտ»¹⁵ և «աքլոր»¹⁶ բառերը, ըստ Հ. Աճառյանի և Գ. Ջահուկյանի, բնիկ հնդեվրոպական ծագման բառեր են: Հիշեցնենք, որ հայերենում նման կազմությամբ ունենք այլ թռչնանուններ ևս, օրինակ՝ ցախաքլոր, անտառաքլոր, ցախահավ, անտառահավ, ցախասարյակ¹⁷: Արխագիա և Կրասնոդարի երկրամաս գաղթած համշենահայերի սերունդները, ըստ մեր դաշտային գրառումների, փայտփորիկին ասում են «ծրկօն», գործածում են նաև «փառփորիկ» բառը: Փայտփորիկի «փառփորի» տարբերակը 1980-ական թվականներին գրառել ենք Ղազախստանի Չիրկինո գյուղի կրոնափոխ համշենցիներից¹⁸:

Քրիստոնյա համշենցիների շրջանում նախկինում ավելի տարածված է եղել «ծգան» թռչնանունը. այդ է վկայում Բաբկեն վրդ. Կյուլեսերյանի բառարանը, որում բառը ներկայացված է «Ծգան (փայտփոր)»: Նա գրում է. «Ծգանը չարագուշակ է ըստ համշենցոց»¹⁹: Իսկ Հ. Աճառյանը թեև իր «Հայերեն գալարական բառարան»-ում նշում է, որ համշենցիները ծառակուտկուտին (փայտփորին) ասում են «ծգան»²⁰, բայց հետագայում «Քննություն Համշենի բարբառի» գրքում այդ մասին չի հիշատակում, այլ գրում է, որ «ծքօն» է կոչվում «փայտփորիկ թռչունի հանած ձայնը»²¹:

4. Խոփայի և Բորչքայի գավառների համշենցիները շերեփուկին ասում են «քեղալբօջիկ» («կրդալբօջիկ»), որ նշանակում է գդալի նման պոչ ունեցող: Ըստ մեր դաշտային գրառումների, Արդվինի նահանգի հարևան Ռիզեի նահանգի Փագարի գավառի թուրքախոս դարձած համշենցիների Խաչափիթ (այժմ՝ Սուբաշը) գյուղում ևս «քրդալբօջիկ» են ասում: Նույն նահանգի Չամլրհեմշինի գավառի թուրքախոս համշենցիները, տեղացի հայրենագետ Ուղուր Բիրյուլի (ծնվ. 1979 թ.) կազմած բառացանկի համաձայն, նույնպես ասում են «քեղալփօջիկ» (kedalpozik)²²: Ջավախքում շերեփուկին ասում են «գրդըլ-

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Գ. Ջահուկյան. Հայոց լեզվի պատմություն: Նախագրային շրջան, Երևան, 1987, էջ 149, 259, նույնի՝ Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010, էջ 757:

¹⁶ Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 368, 369, Գ. Ջահուկյան. Հայոց լեզվի պատմություն, էջ 131, 174, 208, 276, նույնի՝ Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 106:

¹⁷ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 4, Երևան, 1980, էջ 543:

¹⁸ Ս. Վարդանյան. Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), էջ 322, 391:

¹⁹ Բ. Կիլիկեան. Ճանիկի վիճակին մէջ գտնուող համշենցիներու գալարաբարբառը. «Բիրակն», 1899, -44, էջ 700:

²⁰ Հ. Աճառյան. Հայերեն գալարական բառարան, էջ 509, 510:

²¹ Հ. Աճառյան. Քննություն Համշենի բարբառի, էջ 261:

²² Ս. B i r y o l. Kaçkarlar'da Bulut Olsam, Ankara, 2011, s. 204.

պօչ» («վրտըլպօչ»): Ջարմանալի է, որ Կարնո և Ջավախքի հայությանը նվիրված Երվանդ Լալայանի²³, Ղազար-Չարրգի²⁴, Ստեփան Մալխասյանցի²⁵, Վարդ Բոդյանի²⁶ աշխատություններում, Կարնո և Ջավախքի ժողովրդական հեքիաթներում²⁷, «Հայոց լեզվի բարբառային բառարանի» համապատասխան հատորներում²⁸ ու Հ. Մկրտչյանի «Կարնո բարբառ»²⁹ ուսումնասիրության մեջ այդ բառն արձանագրված չէ:

Հետաքրքրական է, որ Խոտորջրի բարբառում «գղլպոչ»-ը բուսանուն է, իսկ շերեփուկին ասում են «գղալիկ»³⁰: Աբխազիայի և Կրասնոդարի երկրամասի քրիստոնյա համշենահայերը շերեփուկին ասում են «շերեպուգ»:

5. 2014 թ. Արդվինի նահանգի Բորչքա քաղաքում ծնունդով Բորչքայի գավառի Մանաստրը (այժմ՝ Եշիլթոյ) գյուղից 86-ամյա Ջելիխա Քոբխմազից գրառել ենք «Աղ ցանուշե» («Աղ ցանելը») գրույցը, որի հերոսներից մեկը հրացանով կրակում է «թուսթերչիգի» վրա³¹: Խոփայի և Բորչքայի գավառների չորս գյուղերի՝ Էշմեքայայի (նախկին Արդալա), Գյունեշլիի (Չադրինա), Փրնարլըի (Անչիոխ) և Եշիլթոյի (Մանաստրը) համշենցիները, ովքեր խոսում են արդալացիների ենթախոսվածքով, մորեխին և ծղրիդին ասում են «թուսթերչիգ», իսկ մյուս գյուղերի բնակիչներն ասում են «թուսթերչիչ»: «Թուսթերչուշ» նշանակում է ցատկել, «թուսթերչիչ» («թուսթերչիգ»)՝ «ցատկող»: Ռիզեի նահանգի Չամլրհեմշինի գավառի թուրքախոս համշենցիները մորեխին և ծղրիդին ասում են «չիփչիփան» (çipçiyan)³², իսկ Փազարի գավառի թուրքախոս համշենցիների Խաչափիթ (այժմ՝ Սուբաշը) գյուղում, ըստ խաչափիթցի հայրենագետ Իբրահիմ Քարաջայի (ծնվ. 1960 թ.) «Հեմշին. պատմություն, լեզու, ավանդույթներ և սովորույթներ» թուրքերեն գրքի, ասում են «zitik»³³ (զիթիթ): Մենք Չամլրհեմշինի գավառի հյուսիսում՝ Քաջքարյան լեռների լանջերին, «Քիթո» սարատեղիում (յալայում) գտնվող «Քոչիրա» իջնանատանը, նրա վարձակալից՝ խաչափիթցի Սերհան Փիրփիրից (ծնվ. 1961 թ.), 2011 թ. գրառել ենք Խաչափիթում դեռևս օգտագործվող մի շարք հայերեն բառեր, այդ թվում՝ «մօէխ», որը նշա-

²³ Ե. Լալայան. Երկեր, հ. 1, Երևան, 1983:

²⁴ Ղազար-Չարրգ. Յուշամատեան Բարձր Հայքի. Կարինապատում, Պէրոլթ, 1957:

²⁵ Առակներ, ավանդություններ, անեկդոտներ (Ախալցխայի բարբառով), գրի առավ Ստ. Մալխասյանց, Երևան, 1958:

²⁶ Վ. Բոդյան. Ջավախքի հայոց ազգագրությունը և ժողովրդական բանարվեստը, Երևան, 2014:

²⁷ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 4, Երևան, 1963:

²⁸ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, Երևան, 2001, հ. Գ, Երևան, 2004:

²⁹ Հ. Մկրտչյան. Կարնո բարբառ, Երևան, 1952:

³⁰ Հ. Յ. վ. Հ ու լ ու ն ե ա ն ե Ն. Մ. վ. Հ ա ճ ե ա ն. Յուշամատեան Խոտորջուրի, Վիեննա, 1964, էջ 437:

³¹ Մ. Վարդանյան. Նոր գրառումներ Արդվինի նահանգի Բորչքա քաղաքում. «Չայն համշենական» (Երևան), 2014, - 9-10:

³² U. B i r y o l. Kaçkarlar'da Bulut Olsam, s. 198.

³³ I. K a r a c a. Hemşin. Tarih, Dil, Gelenek ve Görenekler, İstanbul, 2006, s. 124.

նակում է տհաճ հոտ արձակվող մուգ կանաչ բզեզ: Նույն բզեզին Խոփայի խոսվածքով ասում են «օթիս», իսկ Աբխազիայի քրիստոնյա համշենահայերը՝ «թստիչ»: Մ. Փիրփիրը նույնպես հաստատեց, որ իրենք մորեխին և ծղրիդին ասում են «զիթիք»: Ըստ մեր հարցումների, Հեմշինի (Համշենի) գավառի կրոնավորի հայերը «զիթիք» են ասում սև բզեզին:

Ի դեպ, Խոփայի խոսվածքով «զատիկին» ասում են «ցիբու», բայց այդ բառը քչերը գիտեն, հիմնականում՝ մեծահասակները, իսկ միջին և նոր սերունդն ասում է թուրքերեն «ուլուր բոջեդի» (uğur böceği): Կարծում ենք՝ «զիթիքը» ծագել է հայերեն «զատիկ» միջատի անունից:

Հավելենք, որ Աբխազիայի և Կրասնոդարի երկրամասի քրիստոնյա համշենցիները, ըստ մեր դաշտային գրառումների, գատիկին ասում են «զադիգ», իսկ մորեխին և ծղրիդին՝ «մօրեխ», նաև թուրքերեն «zekirge» (չեքիրգե) բառի իրենց արտասանական տարբերակները՝ «չս կուրգա», «չս կուրտկա», «չս կիրգս», «չեկուրկա»:

6. Արդվինի նահանգի Խոփա (Հոփա) քաղաքում և գավառի Բաշոբա (նախկին Խիզո), Չամուղու (Չանչախանա), Օսմանիյե (Քյաշոդինսուն քեդ, Քյաշոդեց քեդ) գյուղերում, ինչպես նաև Բորչքա քաղաքում ու գավառի Չայր (Բեդլևան) գյուղում քանիցս լսել ենք, թե ինչպես են դանդաղաշարժ մեկին ասում՝ «Ցանցի բես քալե մի» (Ցանցի պես մի քայլիր), «Ցանցի բես էրթա մի» (Ցանցի պես մի գնա), «Ցանցի բես մարթ էս» (Ցանցի պես մարդ էս), «Ցանց էլլի մի, նեստաձ դադնադ վել, հերեքերի արի» (Ցանց մի լինիր, նստած տեղիցդ վեր ել, ուժերդ հավաքիր), «Թուն շադ ցանց էս, դադնադ վի էլե չես» (Դու շատ ցանց էս, տեղիցդ վեր չես ելնում): Երբ հարցնում էինք, թե «ցանց» («ցոնձ») ի նչ է նշանակում, բացատրում էին. «Մէք ցանց թեմբալսուն գասիք, ժաժուշ ուզե չի, վի էլուշ ուզե չի, էրթուշ ուզե չի, քափլումբադային բես գոմաց-գոմաց գերթա» (Մենք ցանց ծուլերին ենք ասում, շարժվել չի ուզում, վեր ելնել չի ուզում, գնալ չի ուզում, կրիայի պես կամաց-կամաց է գնում), «Քափլումբադան ալ գոմաց գերթա, անու բես» (Կրիան էլ է դանդադ գնում, նրա պես):

Հարցվածները չէին կարողանում ստուգաբանել «ցանց» բառը, բայց նրա իմաստը բացատրելիս հաճախ էին օրինակ բերում կրիաների դանդադկոտությունը: Նրանք կրիային ասում են թուրքերեն Kaplumbağa (քափլումբադա), բայց, հասկանալի է, որ մինչև այս փոխառությունը նրանք կրիային ինչ-որ անվանում տվել են: Ի նչ: Ըստ մեր դաշտային գրառումների, Աբխազիայի և Կրասնոդարի երկրամասի քրիստոնյա համշենահայերը կրիային ասում են «թօսպադու» կամ «չերեպախա», նաև գրական հայերենից ներմուծված «կրիա»: Իսկ ի նչ են ասել կրոնավորի համշենցիները: Հարցուփորձերից համոզվում էինք, որ Խոփայի խոսվածքով նախկինում կրիային ասել են «ցանց», հավանաբար, նկատի ունենալով, որ կրիաների մեջքի ոսկրային զրահի (պատյանի) եղջերային վահանիկները ցանցաձև են: Ինչպես հաճախ է պատահում բառը հետզհետե մոռացվել է և

նրա տեղը գրավել է փոխառությունը, մանավանդ որ կրոնափոխ համշենցիներն իրենց մայրենի խոսվածքը գրավոր փոխանցելու հնարավորությունից զրկված են եղել:

Մեր ենթադրությունը հաստատվեց, երբ Խոփայում հրատարակվող «Բիր Յաշամ» («Մեկ կյանք») ամսագրում կարդացինք համշենցի ճանաչված մտավորականներ, Խոփայի խոսվածքով ստեղծագործողներ Հարուն Աքսունի, Հիքմեթ Աքչիչեքի և Մահիր Էօզքանի «Լատինական տառերով համշեներեն գրելու առաջարկ»³⁴ թուրքերեն հոդվածը, որում «*zantz*»³⁵ (ցանց) բառի իմաստը գրված էր *Kaplumbağa*, այսինքն՝ կրիա:

Այժմ անդրադառնանք «ցանց» բառին: Հ. Աճառյանը 1911 թ. գրախոսելով Ն. Մառի «Ճաներեն (լազերեն) լեզվի քերականություն» ռուսերեն աշխատությունը՝ գրում է, որ հեղինակը քիչ ուշադրություն է դարձրել լազերենում և հայերենում առկա փոխառություններին, և գրքից նշում է 82 բառ³⁶, որոնց շարքում է նաև մեզ հետաքրքրող բառը. «Ցանց, հմմտ. լազ. ցանցա «խաղող ևն հալաքելու յատուկ կողով»³⁷: Նա չի պարզաբանում, թե որն է փոխառու լեզուն: «Ցանց» բառին Հ. Աճառյանն անդրադառնում է նաև «Հայերեն արմատական բառարանում», այն ներկայացնելով առանց որևէ նշանի՝ որպես «չմեկնուած բառ», որը հայերենից փոխառել է լազերենը³⁸: Այսօր էլ «ցանցա» բառն օգտագործվում է լազերենում և տեղ է գտել «Լազերեն մեծ բառարանում», որում թուրքերեն բացատրված է. «պնդուկ և խաղող հավաքելու համար կեռասենու կեղևից պատրաստված պայուսակ, զամբյուղ»³⁹:

Ակադեմիկոս Գ. Ջահուկյանը, «ցանց» բառը ստուգաբանելով, գրում է. «թերևս բնիկ հնդեվրոպական բառ է», որը ծագել է հիմք լեզվի «պոկել, անջատել, պոկված կաշի, կեղև, թեփ» արմատից, որը հին կելտերենում ունեցել է «կաշի, մորթ», «վեղև, թեփ», «բարակ կաշի, թաղանթ» իմաստները⁴⁰:

7. Խոփայի և Բորչքայի գավառներում հանդիպում է ճնճղուկազգի մի թռչուն, որի արունների կուրծքը և փորիկը կարմիր է: Թռչնակը ռուսերեն կոչվում է «снегирь» (նաև «красногрудый снегирь»), հայերեն՝ խածկտիկ, եզնակն, եզնակահավ, կարմրակուր-

³⁴ H. A k s u, H. A k օ i օ e k, M. Զ z k a n. Latin Harfleri İle Hemsince Yazım (Ճներիսի.– “Bir Yaşam”, Hopa), 2010, № 8, s. 33. «Բիր Յաշամ» ամսագրի գլխ. խմբագիր Ջեմիլ Աքսունի մեզ ասաց, որ ինքը, այսպես ասած, ժողովրդական ստուգաբանությամբ, միշտ կարծել է, որ կրիաներին «ցանց», «ցանձ» են ասում, որովհետև նրանք «ցանձ» են, այսինքն՝ ցածր են:

³⁵ Հեղինակները, մասնավորապես, առաջարկում էին ձ հնչյունի համար գրել «dz», ց հնչյունի համար՝ «tz», իսկ ծ հնչյունի համար՝ «ts»:

³⁶ Հ. Աճառյան. Н. Мара – Грамматика чанского (лазского) языка. СПб., 1910.– «Արարատ» (Վաղարշապատ), 1911, - 5, էջ 414–420:

³⁷ Նույն տեղում, էջ 419:

³⁸ Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հ. 4, Երևան, 1979, էջ 450, 451:

³⁹ Büyük Lazca Sözlük [Didi Lazuri Nenapuna], Lazca-Türkçe/Türkçe – Lazça, İstanbul, 2007, s. 977.

⁴⁰ Գ. Ջահուկյան. Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 742:

ծիկ⁴¹: Խոփայի խոսվածքով կոչվում է «գարմեզուցք»: Կարծում ենք՝ այն կազմված է «կարմիր» և «կուրծք» բառերից, բայց համշենցիները չեն կարողանում ստուգաբանել, քանի որ «կուրծք» բառը չունեն, կրծքին ասում են «ձիձ», իսկ կրծքավանդակին՝ «սիրդ» (արդալացիները՝ «սիրդ»): Այն, որ նրանք նախկինում ունեցել են «կուրծք» բառը, վկայում է հենց այս թռչնանունը:

8. Ինչպես վերը նշեցինք, Խոփայի խոսվածքով կրծքին ասում են «ձիձ», իսկ կրծկալին՝ «ձիձաման», «ձիձօսն»:

9. Խոփայի և Բորչքայի գավառների համշենցիները ողնաշարին ասում են «բօջբելօխ»: Ըստ մեր դաշտային գրառումների, Ռիզեի նահանգի Հեմշինի (Համշեն) գավառի թուրքախոս համշենցիները ևս ասում են «բօջբելօխ»: Սակայն 1956 թ. նույն գավառի Չամլրթեփե (նախկին Չուղա) գյուղում ծնված ստամբուլաբնակ լրագրող Ադնան Գենչի «Աշխատասեր կանանց երկիրը. Հեմշին» թուրքերեն գրքում գրված է, որ իրենք «օջկելօ» («բօջբելօ») ողնուղեղին են ասում⁴²: Երբ 2010 թ. Ա. Գենչի հետ շրջագայում էինք Համշենի գյուղերով, նրան հարցրեցինք՝ իսկապե՞ս իրենք խ-ի փոխարեն հ են ասում: Պարզվեց, որ նրա համագյուղացիները ևս «բօջբելօխ», «բօջկելօխ» են ասում, բայց քանի որ թուրքերենը իստառ չունի, ուստի ինքը գրել է հ-ով, որը, ինչ խոսք, սխալ է:

Ստամբուլի համալսարաններից մեկում թուրքերեն լեզու և գրականություն դասավանդող Այշենուր Քոլիվարը (ծնվ. 1976 թ.), ով ճանաչված երգչուհի է ու նաև Համշենի բարբառով երգեր է երգում, 2013 թ. Ստամբուլում մեզ ասաց, որ Ռիզեի նահանգի Չայելիի գավառի իր հայրենի Յըլդըզելի (նախկին Ռաշոթ) գյուղի թուրքախոս համշենցիները «բօջբիլուխ» են ասում պոչի, պոչուկի սկզբնամասին:

10. Ռիզեի նահանգի Արդեշենի գավառի Ենիյոլ (նախկին Օջե) գյուղի կրոնափոխ և թուրքախոս համշենցիները ևս իրենց խոսքում բազմաթիվ հայերեն բառեր են օգտագործում: Մենք դրանում համոզվեցինք 2010–2012 թվականներին՝ թուրքագետ Լուսինե Սահակյանի հետ երեք անգամ լինելով այդ գյուղում: Օրինակ՝ Ենիյոլի համշենցիները լվացքի պարանին ասում են «լաթգախ»: Չամլրհեմշինի գավառի համշենցիները «Latkahğ» «լաթթախ» են ասում «վրան լվացք կախելու փայտին»⁴³: Ըստ Հ. Աճառյանի «Հայերեն գաւառական բառարանի», Ակնի, Ատափագարի, Արաբկիրի, Զեյթունի, Լեհահայրի, Խարբերդի, Մանիսայի, Մարաշի, Նոր Նախիջևանի, Չարսանձագի, Պոլսի, Վանի, Տիգրանակերտի, Տրապիզոնի, Քրիի բարբառներով «լաթ» նշանակում է «շոր, ամեն տեսակ հիւսուած կամ գործուած կտոր. 2. զգեստ, հագուստ: Լաթերս փոխեցի, նոր լաթեր պիտի հագնիս: 3. Պլ. [Պոլիս] լուացք. լաթ լուալու գործողութիւնը, որմէ լաթ լուալ Պլ. լուացք ընել:

⁴¹ Ռուս-հայերեն բառարան, Երևան, 1968, էջ 1133, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 4, Երևան, 1978, էջ 707–708:

⁴² A. G e n ç. Çalışkan Kadınlar Ülkesi; Hemişin, Istanbul, 2005, s. 116.

⁴³ U. B i r y o l. Kaçkarlar'da Bulut Olsam, s. 208.

Լաթի իջնալ Պլ. լուացք ընելու իջնել»⁴⁴:

Խոփայի համշենցիները լվացքի պարանին «լաթգախ» չեն ասում, այլ՝ «լվացքի չըվան (չվօն)»⁴⁵: Ըստ մեր դաշտային գրառումների, Աբխազիայի և Կրասնոդարի երկրամասի քրիստոնյա համշենահայերը, ովքեր ծագումով Սամսոն և Օրդու քաղաքների շրջակա գյուղերից են, լվացքի պարանին ասում են «լրվածկի չըվօն», իսկ Տրապիզոնի շրջակա գյուղերից գաղթածների սերունդները՝ «լրվածկի թէո», իսկ եթե մետաղալարից է՝ «լրվածկի թել»:

11. 2010 թ. Արդահանի սարերում՝ «Բիլբիլան լեր» կոչվող յայլայում, մի համշենցի կնոջից՝ Մելիյե Աբբըրբից (ծնվ. 1945 թ., գ. Աբդերե), գրառել ենք «Փէլիսուն փօղօցը»⁴⁶ գրույցը: Նա, որպես իր հետ պատահած միջադեպ, պատմում էր, թե ինչպես է գետակի ափով «փօղօցն ի վա» գալիս, չար ոգու հանդիպել: Խոփայի և Բորչքայի գավառների համշենցիները թեն գետին ասում են «քէո», բայց գետակին կամ վտակին ասում են «փօղօց»: Նշենք, որ Ղրղզստանի և Ղազախստանի կրոնափոխ համշենցիներից մենք գրանցել ենք «փօղօց» բառի իմաստային այլ տարբերակներ՝ «ճանապարհ, որն անցնում է կիրճի, խորը ձորի հատակով կամ բլուրների ստորոտների միջով»⁴⁷: Ըստ Հ. Աճառյանի «Հայերեն գալառական բառարանի», Խոյի բարբառով «փողոց» նշանակում է «աղբանոց», Վանի բարբառով՝ «արտաքնոց», իսկ քաղաքային փողոցին Վանի բարբառով ասում են «փողան»⁴⁸: Համաձայն «Հայոց լեզվի բարբառային բառարանի»՝ «փողոց» բառը Կեսարիայի, Մուշի, Ուրմիայի և Վանի բարբառներում ունի «աղբանոց» իմաստը⁴⁹: Հայտնի է, որ հնում որպես արտաքնոցներ և աղբատարներ են օգտագործվել գետակներն ու առուները: Խոփայի գավառի գյուղերում այսօր էլ գետակներն ու վտակները կատարում են աղբատարների դեր: Քանի որ այդ գյուղերը գտնվում են Մև ծովի ափամերձ անտառաշատ սարերում, որտեղ հաճախ են անձրևներ գալիս, այդ իսկ պատճառով այդ գյուղերում կան բազմաթիվ գետակներ ու վտակներ, որոնց շուրջն էլ ձևավորվել են թաղամասերը: Յայլաներում, սարերում և հովիտներում հոսող գետակներին ու վտակներին նույնպես ասում են «փօղօց»: Հ. Աճառյանը «փողոց» բառի արմատը համարում է «փող»-ը, որ նշա-

⁴⁴ Հ. Աճառեան. Հայերեն գալառական բառարան, էջ 405, նույնի՝ Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1973, էջ 257:

⁴⁵ Ս. Վարդանյան. Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), էջ 292, 358:

⁴⁶ Ս. Վարդանյան. Կրոնափոխ համշենահայերի երգերը և գրույցները. → Ձայն համշենական», 2012, - 5-6:

⁴⁷ Ս. Վարդանյան. Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), էջ 325, 372:

⁴⁸ Հ. Աճառեան. Հայերեն գալառական բառարան, էջ 1077, նույնի՝ Հայերեն արմատական բառարան, հ. 4, էջ 513:

⁴⁹ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Է, Երևան, 2012, էջ 22:

նակում է «նեղ անցք», և գրում է, որ այն «ճոխ ածանցներով աճած մի արմատ է»⁵⁰: Նա թվարկում է այդ արմատով ստեղծված բազմաթիվ բառեր⁵¹, բայց դրանց թվում «գետակ» կամ «վտակ» իմաստով բառ չկա, ուստի կրոնափոխ համշենցիների բառապաշարի այդ բառն ընդարձակում է «փողոց» բառի մեզ ծանոթ իմաստները:

Հավելենք, որ Ռիզեի նահանգի Չամլրհեմշինի և Չայելիի գավառների թուրքախոս համշենցիները գետերին, գետակներին ու վտակներին «ջուր» են ասում: Այսպես, Չամլրհեմշինի հյուսիսում՝ Քաջքարի լեռների լանջերին գտնվող, իր ջրառատությամբ աչքի ընկնող յայլաներից մեկին ասում են «Չերովիթ» (ջուր + հովիտ), մյուսին՝ «Չելմաքչուր» (ձերմակ + ջուր): այս անունով նաև լիճ կա, իսկ «Փաաքչուր» (բարակ + ջուր) յայլան իր անունն ստացել է նրա միջով սրբնթաց հոսող մի շատ նեղ գետակի անունից: Կա նաև «Բօթէնջուր» անունով մի յայլա: Չայելիի գավառում 2011 թ. մենք գրառել ենք «Գարմիչուր» (Կարմիր ջուր) գետանուն և «Չերմէչ» (Չրմեջ) անունով յայլա: Հասկանալի է, որ գետերին, գետակներին ու աղբյուրներին տրվող անունները հաճախ դառնում էին նաև սարատեղիի (յայլայի) անվանում:

12. Ռիզեի նահանգի Հեմշինի, Չամլրհեմշինի և Չայելիի գավառների թուրքախոս համշենցիները ջրվեժին ասում են «Էխյէխսան», «Էխյէխսոն» (թուրքերեն՝ չաղլայան, շելլալե), իսկ Արդվինի նահանգի հայախոս համշենցիները՝ «չախյախսան»: Աբխազիայի և Կրասնոդարի երկրամասի քրիստոնյա համշենահայերը, ըստ մեր դաշտային գրառումների, ասում են՝ «ըրչըրիզ», «ըրչըրուզ», «ցըրցըրուզ», «ըրչըրլոն», «ըրչըրոն»: Վերջին տասնամյակներում ավելի շատ օգտագործում են ռուսերեն փոխառությունը՝ «վադապադ»: Կարծում ենք՝ բոլորն էլ բնաձայնությունն են:

13. Խոփայի խոսվածքում հաճախ են օգտագործում «ձիափ» բառը, որը նշանակում է քաղաք, առևտրի կենտրոն, քաղաքային կենտրոն: Այն հանդիպում է նաև Բորչքայի գավառի Չայլը (նախկին Բեդլևան) գյուղում 2011 թ. մեր գրառած խաղիկներից մեկում:

Չախ քուկար ու քրնացեր,	Անձրն էր գալիս, որ գնացիր,
Յուն էյեվ, նօ ր քրնացեր,	Չուն եկավ, ո՞ւր գնացիր,
Էրգու քյօք գադնէց ամա	Տխլենու երկու տնկիի համար
Չիափօնը մրնացեր ⁵² :	Շուկայում մնացիր:

Ինչպե՞ս է ծագել այս բառը: «Գրառումներ Հեմշինի մահմեդական հայերի խոսվածքի մասին» ուսումնասիրության մեջ ֆրանսիացի նշանավոր բանասեր Ժորժ Դյումեզիլը նշում է, որ Խոփայի գավառի համշենցիների գյուղերը լեռներում են, իսկ խանութները

⁵⁰ Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հ. 4, էջ 512:

⁵¹ Նույն տեղում, էջ 512–514:

⁵² Ս. Վարդանյան. Թուրքիայի Արդվինի նահանգի Խոփայի և Բորչքայի գավառներում. – «Չայն համշենական», 2011, - 9–10:

գտնվում են ծովափին՝ Խոփա քաղաքում, ուստի նրանք իջնում են ծովափ՝ «ձիափ», նույնն է թե՛ քաղաք, շուկա⁵³: Հարվարդի համալսարանի աշխատակիցներ Բերթ Վոքսը, Մերջիո Լա Փորթան և Էմիլի Թաքերը «Լեզվաբանական գրառումներով ազգագրական նյութեր մահմեդական հեմշինցիներից» հոդվածում անդրադառնում են նաև այս ստուգաբանությանը, և այն, որոշ վերապահումով, ընդունելի են համարում⁵⁴:

Նշենք, որ Թուրքիայի համշենցիները քաղաքին ասում են «շահար»: Նրանք «ձիափ» բառը չեն կարողանում ստուգաբանել, քանի որ ծովի ափին, ծովեզրին ասում են «ձովի ջօթ», իսկ «ափ» ասում են ձեռքի ափին: Նրանք ծովափ գնալիս չեն ասում՝ «Յէս ձիափ գերթամ» կամ «Յէս ձովնիուս գերթամ» [Ես դեպի ծով (ծովի կողմ) եմ գնում]։ «ձովնիուս» ասում են հետևյալ դեպքում՝ «Ձովնիուս փուր սա, գեմի գօ» (Ծովի կողմը նայիր, նավ կա): Նրանք ծովի ափ գնալիս ասում են՝ «Յէս ձովե (ձով) գերթամ» (Ես ծով եմ գնում) կամ բարձրադիր գյուղից ծովափ իջնելիս ասում են՝ «Յէս ձովն ի վա գերթամ» (Ես ծովն ի վար եմ գնում): Ծովափին գտնվող լողափին էլ ասում են «փլաժ»: Այն, որ Խոփայի խոսվածքում նախկինում «ծովափ» իմաստն արտահայտող բառ եղել է, հաստատում է նաև այսօր գործածական գետափ՝ «Քեդափ»⁵⁵ բառը. օրինակ՝ «Քեդափանե դադաբե խադա գուն» (Գետափին երեխաները խաղում են):

Կարծում ենք՝ «ձիափ» բառը, ձեռք բերելով «քաղաք», «առևտրի կենտրոն» իմաստները, հետզհետե դուրս է մղել բառի «ծովի ափ» իմաստը և սկսել է կիրառվել նաև Բորչքա քաղաքի համար, որը ծովափից մի քանի տասնյակ կիլոմետր հեռու է: Ուշագրավ է, որ Խոփայի գավառի համշենցիները մոտակա ծովափնյա քաղաքներին՝ Արհավիին, Արդեշենին, Փազարին կամ Ռիզեին «ձիափ» չեն ասում:

14. Խոփայի խոսվածքով «փերնիչ» նշանակում է «ոստիկան», թուրքերեն՝ «փոլիս»: Ըստ մեր հարցումների, այն սկսել են օգտագործել 1970-ական թվականներից: Բառը կիրառելու անհրաժեշտությունն ավելի է մեծացել 1980 թ., երբ Թուրքիայում կատարված ռազմական հեղաշրջման օրերին քաղաքական ձախակողմյան հայացքներ ունենալու պատճառով տասնյակ հազարավոր մարդկանց բանտարկեցին: Քանի որ կրոնափոխ համշենցիների մեջ էլ շատ են ձախակողմյան հայացքներով մարդիկ, մարքսիստներ ու կոմունիստներ, ապա շատ համշենցիներ էլ հետապնդվեցին, ձերբակալվեցին ու բանտարկվեցին, և օտարներին հասկանալի «փոլիս» բառի փոխարեն հասարակական վայրերում սկսեցին ավելի հաճախ ասել «փերնիչ», այսինքն՝ «բոնոդ»: Այսօր էլ բառը լայնորեն կիրառվում է սրճարաններում ու թեյարաններում, մասնավոր գրույցների ժամա-

⁵³ G. D u m é z i l. Notes sur le parler d'un Arménien musulman de Hemşin. - Mémoires de L'Académie Royale de Belgique, Classe des Lettres, t. LVII, fascicule 4, Bruxelles, 1964, p. 15.

⁵⁴ B. V a u x, S. L a P o r t a, E. T u c k e r. Ethnographic Materials from the Muslim Hemshinli with Linguistic Notes.— Annual of Armenian Linguistics, volume 17, Cleveland State University, 1996, pp. 40–41.

⁵⁵ Մ. Վ ա ր դ ա ն յ ա ն. Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը, էջ 232, 326, 347:

նակ: Այն, ծագելով որպես ծածկաբանություն, ժամանակի ընթացքում խոսվածքի բառապաշարի մաս է դարձել: «Լեզվաբանական բառարանում» «Ծածկաբանություն» եզրույթը բացատրված է այսպես. «Հասարակության ապադասակարգայնացած խավերի (գողեր և այլն) ժարգոններին, ծածկալեզուներին հատուկ բառ, դարձվածք, արտահայտություն, որոնք կարող են գործածվել նաև գրական լեզվի մեջ ոճավորման նպատակով»⁵⁶: Կարծում ենք՝ ծածկաբանությունը միայն ապադասակարգայնացած խավերն ու գողերը չեն կիրառում, այլև քաղաքական գործունեության համար հետապնդումների ենթարկվողները, այլախոհները, նաև ուղղամական, պատերազմական իրավիճակներում հակառակորդի թիկունքում գործունեություն ծավալողները և այլն: Ի դեպ, որպեսզի փոքր երեխաները չհասկանան, նրանց ներկայությամբ ծածկաբանությունից հաճախ են օգտվում ծնողները, ընտանիքի անդամները և ուրիշները:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, դեռևս XVIII դարում կրոնափոխված համշենահայերը՝ թուրքախոսներն ու հայախոսները, այսօր էլ օգտագործում են մի շարք հայերեն բառեր, որոնց մեծ մասը չի հանդիպում ոչ միայն այլ բարբառներում, այլև քրիստոնյա համշենահայերի ճանիկի (Ջենիգի) և Տրապիզոնի խոսվածքներում:

О НЕКОТОРЫХ АРМЯНСКИХ СЛОВАХ, ЗАПИСАННЫХ У АМШЕНСКИХ АРМЯН-МУСУЛЬМАН КАЗАХСТАНА, КИРГИЗИИ И ТУРЦИИ

СЕРГЕЙ ВАРДАНЯН

Резюме

Часть амшенских армян, в XVIII в. насильственно принявших ислам в Османской Турции, в XIX в. переселилась из провинции Амшен Трабзонской губернии и в настоящее время живет в Турции, в провинциях Хопа и Борчка губернии Ардвин, провинциях Карасу и Коджаали губернии Сакарья, провинции Акчакоджа губернии Дюздже. Из Аджарии, перешедшей в 1878 г. под власть России, исламизированные амшенцы в 1944 г. были высланы в Казахстан и Киргизию. В течение последних 3-4 десятилетий они эмигрируют из Казахстана и Киргизии в Краснодарский край, Ростовскую и Воронежскую область Российской Федерации. Сегодня в разных странах проживают приблизительно 45-50 тысяч амшенских армян-мусульман, умеющих общаться своим говором «амшецнак» на диалекте Амшена. Много слов и топонимов «амшецнак» употребляют также туркоговорящие, насильственно исламизированные амшенские армяне, проживающие в Турции, в провинциях Хемшин (Амшен), Чамлыхемшин, Икиздере, Чаели, Фндкли губернии Ри-

⁵⁶ Հ. Պետրոսյան, Ս. Գալուտյան, Թ. Ղարաբաղյան. Լեզվաբանական բառարան, Երևան, 1975, էջ 143-144:

зе, провинциях Аракли, Сюрмене и других провинциях Трабзонской губернии, провинциях Ыякутие, Тортум, Испир и других провинциях губернии Эрзурум. Амшенские армяне-мусульмане Казахстана, Киргизии и Турции употребляют ряд армянских слов, которые не встречаются на других армянских диалектах или встречаются, но имеют другой смысл.

ABOUT SOME ARMENIAN WORDS WRITTEN FROM MUSLIM HAMSHENTSI ARMENIANS OF
KAZAKHSTAN, KYRGYZSTAN AND TURKEY

SERGEY VARDANYAN

S u m m a r y

A part of the Hamshentsi Armenians, who were forcibly Islamized in Ottoman Turkey during the 18th century and who left Hemshin (Hamshen) district of Trabzon Province in the 19th century, nowadays live in Hopa (Khopa) and Borchka districts of Ardvin Province of Turkey; in Karasu and Kojaali districts of Sakarya Province; in Akchakoja district of Dyuzje Province; and also in Kazakhstan and Kyrgyzstan, where they were exiled from Adzharia in 1944. During the last 3–4 decades they emigrated to Krasnodar, to Rostov and to Voronezh Regions of the Russian Federation, from Kazakhstan and Kyrgyzstan. Today about 45–50 thousand Muslim Hamshentsi Armenians communicating in native dialect, in their subdialect ‘Hamshetsnak’, live in different countries of the world.

In addition to Armenian-speaking Hamshentsi Armenians a number of “Hamshetsnak” words and toponyms are used also by Islamized Turkish-speaking Hamshentsi Armenians of Hemshin (Hamshen), Chamlihemshin, Ikizdere, Chayeli, Fndkli, Ardeshen, Pazar districts of Rize Province, as well as of Arakli, Syurmene and other districts of Trabzon Province, of Yakutiye, Tortum, Ispir and other districts of Erzurum Province of Turkey.